# ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N «ՀՀԱՄ-ԾՀ-ՄԱԾՁԲ-25/132»

<u>գ. Ծաղկահովիտ</u> **<u>«10» «նոյեմբերի» 2025թ.</u>**

**«Ծաղկահովիտի համայնքապետարան»**-ը, ի դեմս համայնքի ղեկավար՝ **Նորաին Հակոբյանի**, ով գործում է «Ծաղկահովիտի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ԼԱՎՈ» ՍՊԸ**-ը, ի դեմս Ընկերության տնօրեն՝ **Ա. Սահակյանի** (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով **Կատարողը** պարտավորվում է **Պատվիրատուի** հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները, իսկ **Պատվիրատուն** պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար։

1.2. Կատարողը պարտավորվում է մատուցել հետևյալ ծառայությունը՝ **<u>ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Նորաշեն, Գեղարոտ և Ծիլքար բնակավայրերի արտաքին լուսավորման ցանցի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն</u>**, այսուհետ՝ Ծառայություններ։

1.3. Ծառայությունները մատուցված են համարվում Պատվիրատուի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից սույն պայմանագրի 3.2. կետում նշված հաշվարկային փաստաթուղթը ստորագրելու պահից։

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. **Կատարողն** իրավունք ունի՝

2.1.1. Պատվիրատուի կողմից պայմանագրի 3.1. կետում նշված վճարման ժամկետի մեկից ավելի խախտման դեպքում նրանից պահանջել վճարելու վճարը։

2.2. **Կատարողը** պարտավոր է՝

2.2.1. **Ծառայությունները** մատուցել պատշաճ որակով,

2.2.2. **Ծառայությունները** մատուցել ամբողջ ծավալով, սույն պայմանագրի 5.1. կետում նշված ժամկետում,

2.2.3. **Պատվիրատուի** պահանջով ողջամիտ ժամկետում անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները,

2.2.4. **Ծառայությունները** մատուցել անձամբ։

**2.3 Պատվիրատուն** իրավունք ունի՝

2.3.1. Ցանկացած ժամանակ ստուգել **Կատարողի** մատուցած **Ծառայությունների** ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը,

2.3.2. Մինչև սույն պայմանագրի 3.2. կետում նշված հաշվարկային փաստաթուղթը ստորագրելը՝ ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ **Կատարողին** վճարելով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է մինչև պայմանագրի կատարումից **Պատվիրատուի** հրաժարման մասին տեղեկություն ստանալը մատուցված **Ծառայությունների** չափին։

2.4. **Պատվիրատուն** պարտավոր է՝

2.4.1. Սույն պայմանագրով սահմանված ժամկետներում վճարել **Կատարողի** կողմից մատուցած **Ծառայությունների** համար։

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

**3.1. Պայմանագրի** կնքման պահին **Ծառայությունների** մատուցման գինը կազմում է **120 000 (մեկ հարյուր քսան հազար)** ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը, որը **Պատվիրատուի** կողմից վճարվում է աշխատանքի համար աշխատանքի մատուցմանը հաջորդող երեք բանկային օրվա ընթացքում։

3.2. Կատարողը աշխատանքի համար Պատվիրատուին ներկայացնում է հաշվարկային փաստաթուղթ՝ աշխատանքի մատուցմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում (Հավելված 1; 1.1)։

## 4. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրի շրջանակներում ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնությունը ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

## 5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում 10.11.2025 թ-ից և գործում է մինչև 25.12.2025 թ-ը ներառյալ:
5.2. Կողմերից յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է հրաժարվել պայմանագրից՝ այդ մասին գրավոր ծանուցելով մյուս կողմին: Ծանուցագրում նշված ժամկետից պայմանագիրը համարվում է լուծված:

## 6. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1. Սույն պայմանագրով չկարգավորված դրույթները (այդ թվում՝ կողմերի պատասխանատվության հետ կապված) կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով:
6.2. Պայմանագիրը կազմված և ստորագրված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, որոնցից մեկը տրվում է **Կատարողին**, իսկ մյուսը՝ **Պատվիրատուին**:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնար են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա **Կողմերից** յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**Ծաղկահովիտի համայնքապետարան**
**ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Ծաղկահովիտ**
**ՀՀ Ֆին. Նախ.**
**Հ/Հ 900 482 415 016**
**ՀՎՀՀ 05022977**

------------------------Ն. Հակոբյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

**«ԼԱՎՈ» ՍՊԸ**
**ք. Երևան, Բյուզանդի 1/3, 6-րդ հարկ**
**«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ**
**Հ/Հ 1660 018 524 650 100**
**ՀՎՀՀ 02577772**

------------------------Ա. Սահակյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված 1
«10» նոյեմբերի 2025 թ. կնքված
N «ՀՀԱՄ-ԾՀ-ՄԱԾՁԲ-25/132» ծածկագրով գնման պայմանագրի

**Պայմանագրի կողմ**
«ԼԱՎՈ» ՍՊԸ
ք. Երևան, Բյուզանդի 1/3, 6-րդ հարկ
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1660 018 524 650 100
ՀՎՀՀ 02577772

**Պատվիրատու**
Ծաղկահովիտի համայնքապետարան
ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Ծաղկահովիտ
ՀՀ Ֆին. Նախ.
Հ/Հ 900 482 415 016
ՀՎՀՀ 05022977

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 25/132
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«26» «12» 2025թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «10» «նոյեմբերի» 2025թ.
Պայմանագրի համարը՝ N «ՀՀԱՄ-ԾՀ-ՄԱԾՁԲ-25/132»
Պատվիրատուն՝ ի դեմս ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս **«ԼԱՎՈ»** ՍՊԸ-ի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ **«26» «դեկտեմբերի» 2025թ-ին դուրս գրված** A 708525 3402 **հաշիվ վավերագիրը**՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | Քանակական ցուցանիշը | | Կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | Ըստ պայմանա-գրով հաստատ-ված գնման ժամանակա-ցույցի | Փաստացի | Ըստ պայմանա-գրով հաստատ-ված գնման ժամանակա-ցույցի | Փաստացի | | |
| 1 | Լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ՆՆՓ փորձաքննության ծառայությունների մատուցում | ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Նորաշեն, Գեղարոտ և Ծիլքար բնակավայրերի արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն | 1 հատ | 1 հատ | 10/11/2025-25/12/2025թթ. | 10/11/2025-26/12/2025թթ. | 120,0 | 10/11/2025-25/12/2025թթ. |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
ստորագրություն
**Ա. Սահակյան**
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
ստորագրություն
**Ն. Հակոբյան**
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 1.1
«10» նոյեմբերի 2025 թ. կնքված
N «ՀՀԱՄ-ԾՁ-ՄԱԾՁԲ-25/132» ծածկագրով գնման պայմանագրի

# ԱԿՏ N 25/132

**պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ Ծաղկահովիտի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ԼԱՎՈ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2025թ. նոյեմբերի 10-ին կնքված «ՀՀԱՄ-ԾՁ-ՄԱԾՁԲ-25/132» պայմանագրի շրջանակներում Կատարողը 2025թ. դեկտեմբերի «26»-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Նորաշեն, Գեղարոտ և Ծիլքար բնակավայրերի արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն | 1 | հատ |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

**Ա. Սահակյան**
ազգանուն, անուն

ստորագրություն

**Ընդունեց**

**Նորաիր Հակոբյան**
ազգանուն, անուն

ստորագրություն